ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4136-Ա « 25 » օգոստոսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի Հ.191-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Էդմոնդ Խաչատրյանի հ.Դ-69490-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունվարի 27-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.191-Ա որոշման հավելվածի 14-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
25.08.2026թ.
հ. 4136-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Ռոբերտ Սարգսյան /լիազորված անձ/ Արմենուհի Հովհաննիսյան	Դավթաշեն հ.6 շենք, հ.39	բնակարան	Արմենուհի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Դավթաշեն հ.6 շենքի հ.39 հասցեում գտնվող բնակարանին /վկ. հ.28112016-01-0161/ տրամադրել հասցե՝ Դավթաշեն 3-րդ թաղամաս, հ.6/5 շենք, բն.39	01043YBARJNU	
2	Յուրիկ Համայակյան և Սոնյա Սաֆարյան	Մարկվարտի փողոց, հ.37	բնակելի տուն	Յուրիկ Համայակյանին և Սոնյա Սաֆարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Մարկվարտի փողոցի հ.37 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.14012026-01-0161, հող. սեփ. 29.2քմ, ընդհ. բաժն. 65.5քմ, շին. ընդհ. բաժն. 13.7քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 87.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Յ. Մարկվարտի փողոց, հ.37/1	01113WZBCALX	
3	Յուրիկ Համայակյան և Սոնյա Սաֆարյան	Մարկվարտի փողոց, հ.37	բնակելի տուն	Յուրիկ Համայակյանին և Սոնյա Սաֆարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Մարկվարտի փողոցի հ.37 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.14012026-01-0161, հող. 148.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 64.2քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Յ. Մարկվարտի փողոց, հ.37/2	01113K5VM2MW	

4	Էդմոնդ Խաչատրյան /լիազորված անձ/ Անահիտ Մխիթարյան	Նոր Խարբերդի այգետարածք, 127-րդ տեղամաս, հ.15	հողամաս	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 18.11.2025թ. հ.20734 լրացուցիչ վկայագրով, Անահիտ Մխիթարյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Նոր Խարբերդի այգետարածքի 127-րդ տեղամասի հ.15 հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 11-րդ փողոց, 1-ին նրբանցք, հ.19	01113PTYKPBV	
5	Արման Նադիրյան /լիազորված անձ/ «ԱՐՏՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ	Աղբյուր Սերոբի փողոց, հ.44-48 շենք, 1-ին մասնաշենք, հ.117	պոմպակայան	«ԱՐՏՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Աղբյուր Սերոբի փողոցի հ.44-48 շենքի 1-ին մասնաշենքի հ.117 հասցեում գտնվող պոմպակայանի /վկ. հ.04022026-01-0461, ընդհ. բաժն. 1.72քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 4.38քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Աղբյուր Սերոբի փողոց, հ.44-48 շենք, 1-ին մասնաշենք, հ.117/1	01033WWRBV2Z	
6	Արկադի Մինասյան, Աշոտ Զախարյան և Արմեն Բաղդասարյան	Ն. Չարբախ փողոց, հ.21	հողամաս	Արկադի Մինասյանին, Աշոտ Զախարյանին և Արմեն Բաղդասարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ն. Չարբախ փողոցի հ.21 հասցեում գտնվող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 31.07.2026թ. հ.3797-Ա որոշում և վկ. հ.25022026-01-0497/ տրամադրել հասցե՝ Ն. Չարբախ 1-ին փողոց, 4-րդ փակուղի, հ.30/1	01113GNSW9QM	
7	Էդգար Գրիգորյան /լիազորված անձ/ Ավետիկ Գրիգորյան	Նոր Խարբերդ այգետարածք, 10-րդ փողոց	հողամաս	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 13.12.2025թ. հ.21705 վկայագրով Ավետիկ Գրիգորյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Նոր Խարբերդ այգետարածքի 10-րդ փողոցում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 10-րդ փողոց, հ.69	01113JRNTKWT	
8	Վանիկ Նազարյան	Կասկադ թաղամաս համալիրին հարող ձախակողմյան հատված հ.10	հողամաս	Վանիկ Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Կասկադ թաղամաս համալիրին հարող ձախակողմյան հատվածի հ.10 հասցեում գտնվող հողամասին /վկ. հ.23052023-01-0236/ տրամադրել հասցե՝ Կ. Օրբելյան փողոց, հ.15	01063GGLLQPS	
9	Երևան համայնք	Անդրանիկի փողոց, հ.103 շենքին հարող	հողամաս	Անդրանիկի փողոցի հ.103 շենքին հարող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 05.03.2026թ. հ.1259-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Զ. Անդրանիկի փողոց, հ.103/3	01073UVHJVDG	
10	Արբեն Ղուլյան և Վիոլետա Ջանազյան	Ալեք Մանուկյան փողոց, հ.17	տարածք	Արբեն Ղուլյանին և Վիոլետա Ջանազյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ալեք Մանուկյան փողոցի հ.17 շենքում գտնվող նկուղային տարածքի /վկ. հ.2341186/ բաժանման հատակագծով առանձնացվող 27.7քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ալեք Մանուկյան փողոց, հ.17 շենք, շինություն հ.44/1	01063FJKYVB9	

11	Արբեն Ղուլյան և Վիոլետա Ջանազյան	Ալեք Մանուկյան փողոց, հ.17	տարածք	Արբեն Ղուլյանին և Վիոլետա Ջանազյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ալեք Մանուկյան փողոցի հ.17 շենքում գտնվող նկուղային տարածքի /վկ. հ.2341186/ մնացորդային 47.4քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ալեք Մանուկյան փողոց, հ.17 շենք, շինություն հ.44	01063XBBCF5T	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**